ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖՈՒՐՇԵՏՆԵՐԻ ԵՎ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-20/3

ք. Սիսիան «14» փետրվար 2020թ.

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Սարգսյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Հասմիկ Սարգսյան, ի դեմս անհատ ձեռներեց Հ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ֆուրշետների և ճաշկերույթների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը կնքում, հաստատում է ստորագրությամբ՝:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1767300 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ արման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[23]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

---

[23] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է հինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սիսիանի համայնք	Ա/Ձ Հասմիկ Սարգսյան
ք. Սիսիան, Սիսական 31	ք. Սիսիան, Չարենցի 10
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 900292101103	Հ/Հ 220339671848000
ՀՎՀՀ 09215978	ՀՎՀՀ 63058313
Համայնքի ղեկավար _____ Ա. Սարգսյան	Անհատ ձեռներեց _____ Հ. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

_____

Հավելված N 1
«14» փետրվար 2020թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գին/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	55321100	Սիսիանի համայնքի կարիքների համար ֆուրշետների և ճաշկերույթների կազմակերպման ծառայության մատուցման ճաշացանկը՝ 1 հոգու հաշվարկով ներկայացված է Հավելված 1.1-ում: ➢ Վերոնշյալ մենյուին համապատասխան Կատարողը Ծառայությունը մատուցում է 3-ից մինչև 250 անձից բաղկացած խմբի (այսուհետ՝ Խումբ) հաշվարկով, Սիսիան համայնքի Սիսիան քաղաքում գտնվող տարածքում: ➢ Մինչև պայմանագրի ավարտը Կատարողը Ծառայությունը պարտավոր է մատուցել խմբերի ընդհանուր հանրագումարով՝ 274 հոգու հաշվարկով, ուստի գնային առաջարկը պետք է ներկայացված լինի նշված թվի հաշվարկով: ➢ Խմբի թվակազմը ձևավորվում է Ծառայությունը մատուցելուց առնվազն 48 ժամ առաջ Պատվիրատուի կողմից Կատարողին ներկայացված պատվեր-ծանուցումը էլ. փոստի միջոցով կամ առձեռն՝ ստորագրությամբ հանձնելու պահից: Սակայն, Պատվիրատուն իրավունք ունի արդեն իսկ ձևավորված Խմբում կատարելու թվակազմի փոփոխություններ այդ մասին Կատարողին առնվազն 4 ժամ առաջ էլ. փոստի միջոցով կամ առձեռն՝ ստորագրությամբ ծանուցելու միջոցով: ➢ Կատարողը պարտավորվում է վերոնշյալ մենյուին համապատասխան Ծառայությունը մատուցել Հայաստանի Հանրապետությունում գործող հանրային սննդի համար նախատեսված սանիտարահիգիենիկ, սանիտարահամաճարակային, ինչպես նաև հանրային սննդի մատուցման (ներառյալ մատուցման ջերմաստիճանը), պահպանման, տեղափոխման և այլ բնույթի նորմերին, կանոններին ու տեխնիկական հրահանգներին	դրամ	1767300	Ծառայությունը մատուցել խմբերի ընդհանուր հանրագումարով՝ 274 անձ	Սիսիան համայնք, ք. Սիսիան	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում

		համապատասխան: ➢ Կատարողը պարտավորվում է մենյուին համապատասխան Ծառայությունը մատուցելուց առաջ փորձանմուշներ վերցնել պատրաստի խոհարարական արտադրանքից (ներառյալ՝ թեյից, սուրճից, թխվածքից, հյութից և այլն) և դրանց պահպանման համար Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերին համապատասխան դրանք պահպանել առնվազն 48 ժամ և կարիք առաջանալու դեպքում դրանք ներկայացնել Պատվիրատուին կամ Հայաստանի Հանրապետության պատկան մարմիններին՝ փորձաքննություն իրականացնելու նպատակով: Կատարողը պարտավոր է նաև Ծառայության մատուցման հետ կապված սննդամթերքի և հարակից այլ ապրանքների գնման, փորձաքննության, սերտիֆիկացման, տեղափոխման և այլ բնույթի փաստաթղթերը պահպանել առնվազն մեկ տարի ժամկետով և կարիք առաջանալու դեպքում դրանք ներկայացնել Պատվիրատուին կամ Հայաստանի Հանրապետության պատկան մարմիններին՝ փորձաքննություն իրականացնելու նպատակով: ➢ Կատարողը պարտավոր է Ծառայությունը մատուցելուց առաջ՝ կահավորել տարածքը Խմբի թվակազմին համապատասխան Ծառայության մատուցման համար անհրաժեշտ սեղաններով, աթոռներով, սպասքով և այլ համապատասխան գույքով ու այլ ապրանքներով: Ծառայությունը իրականացվում է 2020 թվականի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներում պատվիրատուի կողմից ներկայացված պահանջի հիման վրա: 1-ին փուլով ծառայությունը իրականացվում է ներկայացված քանակի 7%-ի չափով:					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101103
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Հասմիկ Սարգսյան
ք. Սիսիան, Չարենցի 10
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 220339671848000
ՀՎՀՀ 63058313

Անհատ ձեռներեց **Հ. Սարգսյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1/1
«14» փետրվար 2020թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՃԱՇԱՑԱՆԿ

Գնման առարկա	Տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Մեկ անձի հաշվով	Գին /ՀՀ դրամ՝ մեկ անձի հաշվով/
Խոզի խորոված	Պատրաստված տեղական, ոսկրոտ /1-ին կարգի/ (չալաղաջ, մատ), ԳOUS 7724-77, 30-40 կգ-ոց կիսամսեղիքներով, ճարպի շերտի հաստությունը ոչ ավել քան 3սմ, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս 50 %-ից	կգ	0.25	900
Խաշլամա	Պատրաստված տեղական, փափուկ, տավարի մսից: Տավարի մսի նկարագիրն է՝ փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 °C -ից մինչև 4 °C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ՀUS 342-2011:	կգ	0.25	800
Հավի միս՝ խաշած	Պատրաստված տեղական, ամբողջական , Բրոյլեռ տիպի կամ համարժեք, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով հավի մսից, ԳOUS 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	0.15	400
Ձուկ՝ խաշած	Պատրաստված տեղական (իշխան) կամ համարժեք ձկից, թարմ, ամբողջական, 0.7-ից մինչև 1 կգ զանգվածով:	կգ	0.15	300
Պանրի տեսականի	Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: ԳOUS 7616-85 կամ համարժեք: Անվտանգությունը և	կգ	0.05	80

	մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:			
Աղցան 1	Աղցան <<Մայրաքաղաքային>> կամ համարժեք	կգ	0.04	200
Աղցան 2	Աղցան հավի կրծքամսով, սնկով և եգիպտացորենով կամ համարժեք	կգ	0.04	150
Թթվեղեն	Մարինացված վարունգ, բամիա, բոխի, Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	0.1	150
Լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	0.04	50
Վարունգ	Վարունգ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	0.04	50
Թխվածք	<<Մեղրուհի>>, <<Էկլեր>>, <<Միկադո>> կամ համարժեք	կտոր	1	200
Օղի	էթիլ սպիրտի ծավալային մասը 40%-ից ոչ պակաս, շաքարների զանգվածային խտությունը 7-ից մինչև 20գ/դմ3, մեթիլ սպիրտի զանգվածային խտությունը՝ 1,0 գ/դմ3-ից ոչ ավել, ՀUS 181-99: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի,	լ	0.25	400
Գինի	Կարմիր, Խաղողի սպիրտային խմորման ճանապարհով ստացված գինիներ ըստ արտադրության. բնական, էթիլային սպիրտի ծավալային մասը՝ չոր (9%-10%), չոր հատուկ (14%-16%), կիսաչոր (9%-13%), կիսաքաղցր (9%-12%), հատուկ, չոր (14%-20%), թունդ (17%-20%), կիսաաղանդերային (14%-16%), աղանդերային (15%-17%), ըստ որակի և հասունացման ժամկետի՝ երիտասարդ, առանց հասունացված տեսակավոր և հավաքածուական, փաթեթավորումը: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և «Խաղողի	լ	0.08	400

	հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքի:			
Կոնյակ	5 տարի հնեցմամբ, Թափանցիկ փայլով, առանց նստվածքի և կողմնակի խառնուկների, բաց դարչնագույնից մինչև մուգ դարչնագույն ոսկեգույն երանգով, տվյալ տեսակի կոնյակին բնորոշ համով և բուրմունքով, առանց կողմնակի համի և հոտի խմիչք, էթիլ սպիրտի ծավալային մասը 40%-ից ոչ պակաս, շաքարների զանգվածային խտությունը 7-ից մինչև 20գ/դմ3, մեթիլ սպիրտի զանգվածային խտությունը՝ 1,0 գ/դմ3-ից ոչ ավել, ՀUS 181-99: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 26-ի N 954-Ն որոշման, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի,	Լ	0.08	950
Հանքային ջրեր	Ապակյա շշով, 0,5լ, 30/62 (հանքայնացումը 3,9-4,8 գ/դմ^3) կամ 2/61 62 (հանքայնացումը 4,0-4,7 գ/դմ^3), կամ 1/00 (հանքայնացումը 4,2-5,2 գ/դմ^3), կամ 1/2001 (հանքայնացումը 3,2-4,7 գ/դմ^3) հորատանցքից, փաթեթավորումը՝ շշալցված 0,5 դմ^3 տարողությամբ ապակյա շշերում, ՀUS 191-2000: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 30-ի N 491-Ն որոշմամբ հաստատված «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի», «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Լ	1	200
Սև սուրճ	Պատրաստված բնական բոված, դարչնագույն փոշի սուրճից, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տտիպ և այլն), բույրը նուրբ և վառ արտահայտված առանց կողմնակի համի և հոտի, խոնավության զանգվածային մասը՝ թողարկման ժամանակ՝ 4 %-ից ոչ ավելի, պահման ժամկետի ընթացքում՝ 7%-ից ոչ ավելի: Կոֆեինի զանգվածային մասը հատիկավոր և աղացած սուրճում՝ 0,7%-ից ոչ պակաս, աղացվածքի մեծությունը՝ N 095 մաղով անցնող սուրճ 98,5%-ից ոչ պակաս «թուրքական» սուրճի համար և 90,0 %-ից ոչ պակաս մնացած սուրճերի համար: Կողմնակի խառնուկների ներկայություն չի թույլատրվում: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	բաժակ	1	100
Թեյ	Պատրաստված սև թեյից, չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա	բաժակ	1	100

	օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: «Փունջ», բարձրորակ և I տեսակների, ԳOUS 1937-90 կամ ԳOUS1938-90: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի			
Միրգ	Ցիտրուսային մրգեր, խնձոր	կգ	0.35	370
Շոկոլադ	Շոկոլադե կոնֆետներ, Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	0.03	200
Հաց	Մատնաքաշ և լավաշ՝ պատրաստված 1-ին կարգի ցորենի ալյուրից: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %:	կգ	0.4	150
Երշիկեղեն	եփած, կիսաապխտած, հումապխտած, Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	0.05	300
Ընդամենը				*6450(վեց հազար չորս հարյուր հիսուն)*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ ֆին. նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101103
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Հասմիկ Սարգսյան
ք. Սիսիան, Չարենցի 10
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 220339671848000
ՀՎՀՀ 63058313

Անհատ ձեռներեց _____ **Հ. Սարգսյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2

Հավելված N 2
«14» փետրվար 2020թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամեն
1	55321100	Սիսիանի համայնքի կարիքների համար ֆուրշետների և ճաշկերույթների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	-	-	1767300	1767300	1767300	1767300	1767300	1767300	1767300	1767300	1767300	1767300	1767300

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101103
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Հասմիկ Սարգսյան
ք. Սիսիան, Չարենցի 10
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ, Սիսիան մ/ճ
Հ/Հ 220339671848000
ՀՎՀՀ 63058313

Անհատ ձեռներեց _____ Հ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ.